

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2017թ. ընթացքում նախատեսվող միջոցառումների մասին

N	Երկիրը	Միջոցառումը /հիմքը, նկարագիրը/	Ժամկետներն ու վայրը	Կազմակերպող Հայաստանում	Շահառուներ	Արդյունք
1.	Սփյուռքի երկրներ	<p>Համահայկական նկարչական մրցույթ. Մրցույթն անցկացվում է նկարչության ոլորտում՝ Սփյուռքի 6-18 տարեկան մանուկների, պատանիների և երիտասարդների շրջանում: Ընթացակարգը և լրացուցիչ տեղեկությունները պաշտոնական նամակով կտրամադրվեն հունվար ամսվա ընթացքում: Սփյուռքում աշխատանքը կազմակերպվում է հունվար/հունիս ամիսներին: Մնացած ամբողջ կազմակերպչական աշխատանքը իրականացվում է Հայաստանում՝ հուլիս-դեկտեմբեր ամիսներին:</p>	<p>Սփյուռքում՝ առաջին փուլով հայտերի ներկայացում՝ մինչև 2017թ. հուլիս ամիսը</p> <p>Հայաստանում՝ 2017թ. հուլիս-դեկտեմբեր ամիսներ անընդմեջ</p>	<p>ՀՀ ԿԳՆ, Գեղագիտության ազգային կենտրոն</p>	<p>Սփյուռքի բոլոր տիպի ուսումնական հաստատություններ, մշակութային կենտրոններ, նկարչական դպրոցներ, անհատներ</p>	<p>Հաղթողների պարգևատրում Հայաստանում և Սփյուռքում (ցանկալի է ՀՀ դեսպանություններում)</p>
2.	Սփյուռքի երկրներ	<p>Համահայկական հայագիտական օլիմպիադա. Միջոցառումն անցկացվում է Հայաստանում 14-18 տարեկան դպրոցականների համար՝ հայոց լեզվի, գրականության, պատմության և մշակույթի ոլորտներում: Նախապատրաստական աշխատանքը տարվում է համայնքներում: Օլիմպիադայի տեղական փուլի արդյունքներով ընտրված դպրոցականները մասնակցում են Հայաստանում կազմակերպվող մեկշաբաթյա միջոցառմանը: Ընթացակարգն ու ժամանակացույցը կփոխանցվի հունվար ամսին:</p>	<p>Սփյուռքում՝ նախապատրաստում և մասնակցության հայտերի ներկայացում՝ մինչև 2017թ. հունիսի կեսը</p> <p>Հայաստանում՝ 2017թ. հուլիսի վերջին տասնօրյակը կամ օգոստոսի առաջին տասնօրյակը</p>	<p>ՀՀ ԿԳՆ, ԵՊՀ-ի Շ.Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական հատուկ դպրոց</p>	<p>Սփյուռքի մեկօրյա և ամենօրյա դպրոցներ, ուսումնական ծրագրեր իրականացնող կենտրոններ</p>	<p>Օլիմպիադայի անցկացում Հայաստանում ընդհանուր թվով շուրջ 100 մասնակցի համար</p>

N	Երկիրը	Միջոցառումը /հիմքը, նկարագիրը/	Ժամկետներն ու վայրը	Կազմակերպող Հայաստանում	Շահառուներ	Արդյունք
3.	Սփյուռքի երկրներ	<p>Սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստում. Միջոցառումն իրականացվում է մեկամսյա ծրագրով՝ 120 դասաժամերի շրջանակներում: Ծրագրին կարող են մասնակցել շուրջ 65 ուսուցիչներ, որոնցից մի մասի կեցությունը, սնունդը և ծրագրային այլ ծախսերը ստանձնելու է ՀՀ ԿԳՆ-ն: Մի մասը կարող է մասնակցել ծրագրին՝ կեցությունը հոգալու դեպքում: Նրանց համար սնունդը և այլ ծրագրային ծախսերը նույնպես անվճար են: Պայմանները հայտարարությամբ կներկայացվեն փետրվար ամսվա ընթացքում</p>	<p>Սփյուռքում նախապատրաստական գործընթաց չի նախատեսվում: Հայտերի ներկայացում՝ մինչև 2017թ. հունիսի կեսը</p> <p>Հայաստանում՝ 2017թ. հուլիս ամիսն ամբողջությամբ</p>	ՀՀ ԿԳՆ, շահող կազմակերպություններ	Սփյուռքի բոլոր տիպի ուսումնական կառույցների մանկավարժներ	Մեկամսյա ծրագրի իրագործում Հայաստանում և վկայականի հանձնում
4.	Բոլոր երկրներ	<p>Հայոց լեզվի կարճաժամկետ ծրագիր Հայաստանում Միջոցառումն անցկացվելու է առաջին անգամ՝ սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման ծրագրի շրջանակներում: Նախատեսվում է արտասահմանյան բուհերում հայոց լեզու ուսումնասիրող ուսանողների մասնակցությունը: Ծրագիրը մեկամսյա է, 120 դասաժամ: Միջոցառման և ուսումնական ծրագրի մանրամասները կտրամադրվեն փետրվար ամսվա ընթացքում:</p>	<p>Հայտերի ներկայացում՝ 2017թ. հունիսի սկիզբը</p> <p>Հայաստանում անցկացում՝ 2017թ. հուլիս ամիսը ամբողջությամբ</p>	ՀՀ ԿԳՆ, շահող կազմակերպություններ	Արտասահմանյան բուհերի հայոց լեզու ուսումնասիրող ուսանողներ	Լեզվի և մշակութային մեկամսյա ծրագիր Կրեդիտները կարող են տրամադրվել առանձին բուհերի հետ պայմանավորվածության հիման վրա

N	Երկիրը	Միջոցառումը /հիմքը, նկարագիրը/	Ժամկետներն ու վայրը	Կազմակերպող Հայաստանում	Շահառուներ	Արդյունք
5.	Սփյուռքի երկրներ	<p>Կրթության ոլորտի գործիչների պարզևատրում</p> <p>Պարզևատրումը ՀՀ ԿԳՆ շնորհակալագրով, պատվոգրով կամ Ոսկե հուշամեդալով իրականացվում է ազգային կառույցների և/կամ ՀՀ դեսպանությունների միջնորդությունների հիման վրա: Պարզևատման համար անհարժեշտ չափանիշները և կարգը կփոխանցվի հունվար ամսին:</p>	Տարվա ընթացքում՝ ըստ նպատակահարմարության Սփյուռքում (ՀՀ դեսպանություններում կամ դրանց միջոցով) կամ Հայաստանում	ՀՀ ԿԳՆ, ՀՀ դեսպանություններ	Սփյուռքի կրթական ոլորտի գործիչներ և բարերարներ	Պարզևատրում ՀՀ ԿԳՆ շնորհակալագրով, պատվոգրով կամ Ոսկե հուշամեդալով
6.	Սփյուռքի երկրներ	<p>Օտարերկրյա դիմորդների ընդունելություն ՀՀ ուսումնական հաստատություններ</p> <p>Ընդունելությունն իրականացվում է ՀՀ բոլոր մասնագիտական հաստատություններում: Փաստաթղթերը ներկայացվում են ՀՀ ԿԳՆ անձամբ դիմորդի կամ ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների միջոցով: Մանրամասն տեղեկությունները և ժամկետները կտրամադրվեն ապրիլ-մայիս ամիսներին:</p>	Հուլիս-օգոստոս, նախապատրաստական բաժնի համար՝ մինչև դեկտեմբեր	ՀՀ ԿԳՆ, բուհեր, ՀՀ հյուպատոսություններ	օտարերկրյա քաղաքացիներ, այդ թվում՝ սփյուռքահայեր	Ընդունելություն միջին մասնագիտական, բակալավրիատի, մագիստրատուրայի, ասպիրանտուրայի, դոկտորանտուրայի, դասընթացների